

616.9
mu - 28



07 MAY 2013

3-0 JUL 2010

Թ. Վ. Ար. Խ 0 2 0 8 9 6 6 6

№ 7.

Բ Ա Ր Ա Ր
ԵՒ
ՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ

Տ Ի ֆ

(Сиамской и возвратный тифъ).

ԳԻՅԸ 30 ԿԱՊ.


Գանձկան, Тифлисъ Вознесенская ул. № 8
кв. Д-ра В. Хачатрянца.

616. 9
Խ - 28

Զ Բ Ա Լ Ի Ս
Հ ա մ ե լ պ օ յ ի ս տ ո ւ թ ա կ ա ր ա ն է մ 8
1917

16

616.9
հ-98



ՔԱՂՈՐԾ ԵՒ ՈՐՈՎԱՅՆԱՅԻՆ ՏԻՒ

I

Բ Ժ Ա Լ Ո Ր Մ Ի Փ

Բծաւոր տիֆլ շատ աւելի հին ծագում
ունի և շատ աւելի վատանգաւոր է, քան
անդրադարձ տիֆլ. սրան իբրև փաստ կա-
բող է ծառայել Նրմի պատերազմու, որի
ընթացքում անգիտական դօրքի մէջ մահա-
ցած են 16,000 մարդ, Գրանսիական դօրքի
մէջ 80,000, իսկ ուստական դօրքի մէջ գոյ-
ների թիւը հասած է մինչի 800,000-ի:

Բծաւոր տիֆլ տարածման պատճառն ևս
այսօր ըստ գիտնականների մեծադրու մա-
սի կարծիքի, հանդիսանում է սովորական
ովիլը. այս պատճառով էլ այս հիւանդու-
թիւնն ևս զիւաւորապէս տարածվում է
զինւորականների և ազգատ դասակարգի
մէջ:

Գիտնական Նիկոլը, այս բանը ապացու-
ցանելու համար, բծաւոր տիֆլ հիւանդ
ժարդկանց մարմնից հաւաքելով միջատնե-
րը (որոնք անշուշտ վարակված պէտք է լի-
նէին) տեղափոխում է բոլորովին առողջ
կապիկների վրա, որի շնորհիւ մի քանի օ-
րից յետոյ այդ կապիկները հիւանդանում են

տիֆուս։ Նոյն փորձերը արած են ևս գիտականներ Սէրժէնը և Տէօպֆէրը։

Պրօֆէսօր Իւրդէնսը համոզված է, որ բը-
ծաւոր տիֆով հիւանդը ուղղակի կերպով
չի կարող վարակել առողջ մարդուն, այլ
հիւանդից թոյնը պէտք է անցնի ոջիլին,
իսկ վերջինիցս միայն մի ուրիշ առողջ
մարդու։

Փիտնականներից մի քանիսը, մանաւանդ
Փրանսիական պիտնականները, մի շարք յօ-
դուածներով («La presse medicale») հաս-
տատում են, որ բացի ոջիլներից մասամբ
էլ այլ ճանապարհներով է հիւանդութիւնը
տարածվում, օրինակ օդի միջոցով։

Եթէ աւելի մանրամասն խօսելու լինենք
վարակման զանազան ենթադրական ձեռքի
մասին, մենք շատ հեռու զնացած կը լի-
նենք. այդ պատճառով էլ անցնենք հիւան-
դութիւն բուն ընթացքին. միայն այսքանն
ի նկատի առնենք, որ միշտ էլ բծաւոր տի-
ֆով հիւանդը ներկայանում է իրքի վա-
րակման ազիբուր և հետեւապէս պէտք է հիւ-
անդին առանձնացնել ընդհանուր բնակա-
րանից և ամեն անգամ, երբ մենք որևէ
կերպ գործ ենք ունենում հիւանդի հետ,
խալոյն և եթ պէտք է մաքուր լուսնանք
մեր ձեռքերը. և աւելի լաւ է եթէ մենք հիւ-
անդի սենեակը մտնելուց առանձին վեր-
նաշապիկ հագնենք։

Վարակվելով բծաւոր տիֆով՝ մարդս 12
—14 օր ոչ մի հիւանդապին նշան չի ցոյց

առաջիս, այլ միայն այդ ժամանակամիջոցը
անցնելուց յետոյ՝ վարակվածը յանկարծ
տաքութիւն է տալիս մօտ 40°. տաքութիւ-
նը երբեմն սկսվում է զորոցով. տաքու-
թեան հետ միասին երևան է զալիս գլխա-
ցաւ, սրտի խառնումն, փսխումն և այլն...
մօտ 3—5 օրից յետոյ մարմար (մանաւանդ
որովայնի, ոտքերի և բաղուկների) վրա ե-
րևան են գալիս առաւ բծեր, որոնք սէլքրում
բաց վարդագոյն են լինում, իսկ մի քանի
օրից աւելի մուը գոյն են ստանում։ Հիւան-
դի ընդհանուր զրութիւնը շատ ծանր է լի-
նում, ամբողջ մարմնի մէջ ցաւ է զգում,
հիւանդը կորցնում է քունը և շատ յաճախ
տաքութիւնից զառանցանքի մէջ է ընկ-
նում, երբեմն էլ բոլորովին կորցնում է
բնընազդիսակցութիւնը։ Տաքութիւնը տե-
սում է 32—17 օր, որից յետոյ բարեյածող
դէպքում տաքութիւնը պակասում է, հիւ-
անդութիւն ախտանիշները կամաց-կամաց
շքանում են, և հիւանդը սկսում է կաղ-
զուրփել. այն ինչ չարաբաստիկ ծանր
դէպքերում տաքութիւնը շարունակվում է,
հիւանդի զրութիւնը աւելի է վստաթարա-
նում, սիրտը թուլանում է հիւանդութեան
թոյնի և տաքութիւն ազդեցութեան տակ,
կամ այլ օրգանների կողմէց առաջացած
բարդութիւնից հիւանդը մահանում է։

Մնացած երկրորդական նշանակութիւն
ունեցող ախտանիշների վրա կանդ չենք
առնի, անցնենք մի քանի խօսքով բուժ-

ման և ապա նախաղգուշական միջոցներին։
Բծաւոր տիֆի դէմ չը կայ առանձնայատուկ
միջոց, որով կարելի լինէր կուել նրա դէմ.
բոլոր եղած միջոցները և բուժման համար
առաջարկված այս կամ այն դեղերը ծա-
ռայում են հիւանդութեան զանազան ախ-
տանիշների դէմ կուելու և հիւանդի ընդ-
հանուր դրութիւնը թեթևացնելու, որոնց
մասին մենք կը խօսենք որովայնային տի-
ֆի բուժման բաժնում, որը և համապա-
տասխանում է բծաւոր տիֆի բուժման ախ-
տանիշներին։

Այժմ քանի որ ընդհանուր օրէնք է, որ
բծաւոր, ինչպէս և անդրադարձ տիֆը տա-
րածվում են գիւաւորապէս ոջինների միջո-
ցով, այդ պատճառովէլ մանրամասն յիշենք
այն բոլոր միջոցները, որոնցով կարելի է
ազատվել այդ վնասակար միջատներից։

Ոջիններից ազատվելու գիւաւոր միջոցը
մաքրութիւնն է. ամեն ոք պէտք է իմա-
նայ, որ մաքրասիրութիւնը, ջուրը և օճառը
հանդիսանում են այդ միջատների ամենա-
գլխաւոր թշնամին։ Եթէ մենք մեր մար-
մինը մաքրուր պահենք և միշտ թարմ, մա-
քրուր սպիտակեղէն գործածենք, երբէք ո՛-
չիններ չեն կարող բռն գնել, բազմանալ
այլ ընդհակառակն կոչնչանան, կանյայտա-
նան մեր մարմնից։ Ներկայիս պատերազմի
դաշտում, քանի որ հարատրութիւն չը կայ
մաքրութեանն ու առողջապահական պա-
հանջներին հետևելու, սպիտակեղէնները յա-

ճախակի փոփոխելու և այդպիսով ազատ-
վելու ոջիններից, ստիպված ենք դիմելու
զանազան ուրիշ միջոցների, որոնցով և
կարելի է ազատվել այդ պարագիտներից։

Գլխի ոջիններից կարելի է հեշտութեամբ
ազատվել, եթէ գլխի մազերը շատ կարճ
պահենք և աւելի լաւ եթէ ածիլենք. վերջին
դէպքում և ոչ մի ոջիլ չի կարող իր գո-
յութիւնը շարունակել։ Մազերի արմատների
մօտ կզած ոջիններից, մանաւանդ նրա ձը-
ւիկներից ազատվելու համար պէտք է գու-
լումը լուանալ տաք ջրով և քացախով,
իսկ երբ առ զուր կամ քացախ ձեռք բե-
րելու հնարաւորութիւն չունենք, այդպիսի
դէպքում պէտք է գլխել նաւթի օգնութեան,
որից քիչ քանակութեամբ պէտք է գումը
քսել. նաւթի ազգեցութիւնից ժամանակի
ընթացքում մազերի արմատներին կզած
ձուիկները և ոջինները ոչնչանում են. ի
հարկէ նաւթի բռնկվող յատկութիւնը և
նկատի առնելով պէտք է զգոյց լինել կրտսել։

Առանձնապէս պէտք է ուշադրութեան առ-
նել այն միջոցները, որոնցով կարելի է հե-
ռացնել, ոչնչացնել հագուստի ոջինները։

Ամենալաւ միջոցներից մէկը չոր տարու-
թիւնն է, որը կարելի է ձեռք բերել հե-
տեւալ կերպով. եթէ հաց թիւնելու թունիք
կայ, հացը թիւնելուց և թոնիքից դուրս տա-
կայ, յետոյ, քանի գեռ բաւական մեծ առ-
ուց յետոյ, քանի գեռ բաւական մեծ քու-
թիւն, կայ, պէտք է ոջլու շորերը դնել
այդ թոնիք մէջ, բերանը ծածկել և թողնել

15—20 բառէ, որից ոչ թէ միայն ոջիներն են արաքում-ոչնչանում, այլ և նրանց բազմաթիւ ձուիկները: Այսպիսի վայրերում, ուր հաց թխելու թոնիք չը կայ, պէտք է կրակ անել և այդ կրակի վրա թափ տալ ովտո շորերը, ի հարկէ զգուշութեամբ, որպէսզի հագուստը չայրվի:

Կարելի է նոյնպէս սպիտակեղէնը եփ տալ ջրի մէջ, ևթէ մեծ կաթուայ կայ, իսկ հակառակ դիպուտում՝ պէտք է որևէ անօթից եւացող ջուր ածել հագուստի ովտո մասերի վրա, որից և ոջիները հեշտութեամբ ոչնչանում են, ալս միջոցը շատ յասմար է մանաւանդ պատերազմի դիրքերում գտնվող գինուրների համար, որոնք հարաւրութիւն չունեն վերը յիշած միջոցներից օգտվելու:

Բայց այս միջոցներից, կան և այսպէս կոչված սառն միջոցներ, որոնցից լաւագոյնն է նաւթիր, սկիպիդարը: Հագուստի այն մասերը, ուր խմբված են լինում ոջիները կամ նրանց ձուիկները, պէտք է թաթախել նաւթով կամ սկիպիդարով, որից ոչ թէ միայն ոչնչանում են ոջիները, այլ և բաւական երկար ժամանակ, քանի նաւթիր կամ սկիպիդարի հոտը անհետացած չէ, այդ միջատները չեն կարողանում բուն զբնել և բազմանալ, շնորհիւ անդուրեկան հոտի:

Սուաջապահ դիրքերում ամիսներով միևնոյն սպիտակեղէնի մէջ նստած զինուորա-

կանները ոջիներից կարող են խոյս տալ, եթէ շաբաթը մի անգամ նաւթ քսեն իրանց հագին սպիտակեղէնի որոշ մասերը, մանաւանդ օձիքը, թենոցները, վարտիքի գոտին և կօշիկների վերին մասերը:

Կան և այլ միջոցներ՝ առաջարկված վինուրականների համար, սակայն դրանց մասամբ դժուար է ձեռք բերել և մասամբ էլ գրրծածութիւնը բարդութիւնների հետ է կապված:

Թիկունքում աւելի լաւ յարմարութիւնների մէջ ապրովների համար, մենք առաջ ենք բերում մի քանի բարդ միջոցներ՝ միջատներից ազատվելու համար:

1) Վերցնել շ գրամ կարրօկեան թթւուա, նաւթալին 5 գրամ, էֆիր 25 գրամ և սկիպիդար 100 գրամ, այս բոլորը միասին խառնելուց յետոյ կարելի է գործ ածել ինչպէս նուխագուշական միջոց՝ քսերով հագուստի որոշ մասերը, որի հոտից ոջիները խոյս են տալիս:

2) Պէտք է վերցնել 20 գրամ էֆիր, 40 գրամ սպիրտ և 60 գրամ կսիլոլ, այս խառնուածքի մէջ պէտք է թրծել մի փոքր կտոր բամբակ և քսել մարմնի և հագուստի այն մասերը, որտեղ բուն են դրած ոջիները, սա շատ լաւ ազդում է թէ ոջիների և թէ նրանց ձուիկների վրա: Գդուշ լինել կրակից, քանի որ այս խառնուրդը շատ հեշտաւթեամբ բանկվել կարող է:

3) Մալինինի հեղուկ, և ըլլինս կարելի է

հանուր առմամբ կարելի է բաժանել հետեւալ կերպով.

Առաջին շաբաթ: Ակզի 3—4 օրում առքութիւնը աստիճանաբար բարձրանում է մինչև 40° , երեան է գալիս դիմացաւ, յաճախ քթից արիւնհոսութիւն, երբեմն փորկապութիւն. փայծախը յաճախ ուռչում է:

Երկրորդ շաբաթ: Առաջին շաբթի վերջին օրերը կամ երկրորդ շաբթի սկզբին հիւանդի կրծքի և որովայնի վրա երևան են գալիս վարդագոյն բծեր և փորկապութիւնը փոխվում է լուծի (գեղնագոյն) օրական 3—4 անգամ:

Երրորդ շաբաթ: Սկսվում է տաքսութեան աստիճանաբար իջնելը, այս ժամանակամիջոցը երկիւղավի է այն տեսակէտից, որ աղիքներից արիւնկութութիւն կարող է առաջ դալ (իբրև նշան արիւնհոսութեան կարող է ծառայել հիւանդի լուծի մուը կամ սև դոյնը դեղինի փոխարէն). և կամ աղիքների վրա գտնված խոցերը կարող են ծակել աղիքի պատերը և հիւանդի կեանը վտանգի ենթարկել:

Չորրորդ շաբաթ: Տաքութիւնը աստիճանաբար պակասելով հասնում է բնական աստիճանի, հիւանդութեան նշանները թուլանում են, երեան է գալիս ախորժակ, որից յետոյ հիւանդը կամաց-կամաց առողջանում է:

Ինչ վերաբերում է բուժման միջոցներին, պէտք է յիշել հետևեալը.

Հիւանդին պէտք տեղաւորել մաքուր մեծ սենեակի մէջ, որը յաճախակի օդափոխութեան պէտք է ենթարկել, բաց անելով պատուհանները: Հիւանդի անկողինը պէտք է լինի փափուկ և ամեն օր պէտք է փոփոխել սպիտակեղինը: Եթէ տաքութեան շնորհիւ հիւանդը զառանցում է, պէտք է զգոյշ լինել և չը հեռանալ հիւանդից, գլխին պէտք է դնել ցուրտ ջրի կամ սառուցի փամփուշտ, տաքութիւնը պակասեցնելու համար լաւ է ազդում թարմացուցիչ լողացանները (23—35⁰ R.) օրական 2 անգամ մի քանի բօպէով: Լողացանում զնիիս եթէ հիւանդը թոյլ է, պէտք է տալ մի քիչ գինի, իսկ եթէ հնարաւորութիւն չը կայ լողացանը զնիելու, հիւանդի մարմինը պէտք է շփել ջրախառն քացախով և կամ հիւանդին մի քանի բօպէով փաթթաթել՝ սառը ջրի մէջ թրջված սաւաններով:

Երիւնլուծութեան առաջն առնելու համար պէտք է փորի վրա սառը փամփուշտ դնել և մէջքի վրա հանգիստ պակեցնել: Դեղիքից կարելի է տալ օպիում (ըստ բժշկի հայեցողութեան), կերակուրը պէտք է լինի հեշտամարս, նպաստակայարմար է կաթ, մննպալից մասջուր, պինդ, գծուարամարս կերակուրները կարող են գրգռել աղիքների վրայի ինցերը և առաջ բերել արիւնհոսութիւն: Սրտի թուլութեան դէմ կարելի է տալ քիչ քանակութեամբ կօնեակ, գինի, սուրճ, իսկ դեղիքից բժշկի թոյլտու-

թեամբ կօֆֆէին, ստրօֆանտին, կամֆօրա
և այլն: Տաքութիւնը վերջնականապէս
իշնելուց մի շաբաթ յետոյ հիւանդին կա-
րելի է մասամբ բժշկված համարել, որից
յետոյ նա պէտք է անկողնում էլի մի շա-
բաթ մնայ և միմիայն այն ժամանակ թող-
նէ անկողինը, երբ իրան բաւական կազ-
դուրված զգայ: Եթէ առողջանալուց յետոյ
կրկին հիւանդութեան նշաններն երևան
գան (բեցիդիվ), պէտք է նրան անմիջապէս
պառկեցնել անկողնի մէջ և բժշկել նախկին
ձեռով:

Վերջին ժամանակներս առաջարկված է
նոյնպէս եօդով բուժումն:

Բուժման այս բոլոր միջոցները գործա-
դրվում են նոյնպէս անդրադարձ տիֆի և
մանաւանդ բժաւոր տիֆի ժամանակ:

Առանձնապէս միծ նշանակութիւն պէտք
է տալ նախազգուշական միջոցներին:

Նախազգուշական միջոցներից զիմաւորը
մաքրութիւնն է և առողջապահական պահանջ-
ներին խիստ հետեւումը: Հիւանդներին պէտք
է առանձնացըել, վարակման վայրը ախտա-
հանութեան ենթարկել, խնամող անձնա-
ւորութիւնները պէտք է ըստ հնարաւորու-
թեան հեռու մնան շրջապատող առողջներից,
պէտք է վերնաշապիկ հագնեն և խստու-
թեամբ հետեւն իրանց մաքրութեան վրա,
ձեռները յաճախակի լոււանան: Հիւանդի
սպիտակեղէնը պէտք է նախ քան լուանալը

դնել որիէ ախտահանիչ լուծուածքի մէջ.
լուանալիս պէտք է լու եփ տալ:

Հիւանդների մէզը և աղտոտութիւնը
պէտք է նոյնպէս ախտահանութեան են-
թարկել, ածելով վրան կրի լուծուածք
և ապս արտաքնոցների մէջ թափել: Հում
ուր համաճարակի ժամանակ երբէք չը
զիտք է գործ ածել, այլ միայն եփած:

Որովայնային տիֆի համաճարակի ժա-
մանակ պէտք է հակատիֆեան պատուաստի
բրկումն կատարել որը, ինչպէս փորձերը
ուցը են տուել, մեծապէս նշանակութիւն
ունի, և եթէ, պատուաստի սրսկումից յետոյ,
նարդս վարակվում է տիֆով, յամենայն
չկապս աւելի թոյլ կերպով և աւելի շուտ
է բժշկվում:

Եթէ այս բոլոր պահանջները կատարելու
միանք և եթէ ընդհանրապէս հետեւնք առող-
ջապահական կանոններին, անշուշտ ամեն-
անգիտ համաճարակների առաջն իսկ կա-
տելի է շատ հեշտութեամբ առնել:

Բժ. վ. Խաշատրեանց



ԴՐԱՄԱՐ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ ԱՇԽԱ.
ՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1) Triphenylmonomethylarsoniumjodid und seine pharmak. Wirkung. (սպառած)
- 2) Սիֆիլիս և Համա-էնցիլիմեն «606»-ը (սպառաթիւ) . 15 կ.
- 3) Сохранение здоровья (սպառած).
- 4) Волосы 10 կ.
- 5) Բազմածնութիւն, արուեստական տմլութիւններկարեղմանառական մջջ. Բ. տպ 25 կ.
- 6) Անդրագարձ տիֆ 20 կ.
- 7) Բծաւոր և որովայնային տիֆ 30 կ.
- 8) Վագոնագործութեան ՀԱՄԱՐ ՊԱՏՐՈՒՄ Կ.
- ա) Կեռջ «Յսկի գիրը»
- բ) Գигиена женщины.
- գ) Երեխաների հրւանդութեան քաղցկերան
- դ) Առողջապահութեան դաւընթաց.

Պահուարք—Тифлицъ. Вознесенская ул. № 2
Հեղինակի գոտ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0267759

6941